Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№ 3 Գրադարան «ՅՈՒՍԻՍ»-ի № 3

Ս. ՖԵԴՈՐՈՎԻՉ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՓՈՂԵՐԸ

ԻՆՉՊԷՍ ԵՆ ՀԱՒԱՔՒՈՒՄ ԵՒ
ԻՆՉԻ ՎՐԱՑ ԵՆ ԾԱԽՍԻՈՒՄ

ԹԱՐԳՄ. ՌՈՒՍԵՐԷՆԻՑ

ԹԻՖԼԻՍ

1906 Թ.

ԳԻՆՆ Է 5 ԿՊ.

336
Ֆ-32

15 JAN 2010

А 85 ղ.

№ 3 Գրադարան «ՅԱՌԱՋ»-ի № 3

336
Ֆ-32

Ս. ՖԵԴՈՐՈՎԻՉ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՓՈՂԵՐԸ

ԻՆՉՊԷՍ ԵՆ ՀԱՒԱՔՒՈՒՄ ԵՒ
ԻՆՉԻ ՎՐԱՑ ԵՆ ԾԱԽՍՒՈՒՄ

Н/2

ԹԱՐԳՄ. Ա. Մ.

Հայաստ. ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՒՂԱՐ
ՀՍՍՌ Պ. ԳԻՏ-ԱԿ Արմ. ՍՍՌ
ՓԻՍԱՆԱԿՄԱՆ ՖՈՆԴ
ОБЫЕННЫЙ ФОНД
Ա. Մ. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Գր. Զարկվիանի Միքայէլեան փողոց № 40.

1906 թ.

5 SEP 2013

27.051

1114
42.

Մեր ժամանակւայ բոլոր տէրութիւնները իրենց հազար ու մի կարիքներին բաւարարութիւն տալու համար ամեն տարի ծախսում են անհագին գումարներ, հարիւր հազարաւոր միլիոն ռուբլիներ։

Տէրութիւնները այդ փողերը որտեղից են ձեռք բերում։— Այսպէս հարցնողին սովորաբար պատասխանում են՝ «Խաղից», «Գանձարանից»։—Լաւ։

Բայց ինքը, այդ գանձարանը որտեղից է շարունակ փող ստանում։

Գանձարանի փողը գալիս է այն անթիւ անհամար տուրքերից, խարջերից, հարկերից, որ տէրութիւնը դրել է բոլոր բնակիչների վրայ։

Ով ունի հող, տուն, գործարան, կամ ով պարապում է վաճառականութեամբ, հանքագործութեամբ և այլն, տէրութիւնը նրա վրայ հարկ է դնում։ Այդ տեսակ հարկը սովորաբար կոչւում է ուղղակի հարկ, որովհետև ամեն մէկը, իրը թէ, իր ունեցած կարողութիւնից է տալիս։ Սակայն սա ճշմարտութիւնից շատ հեռու է. բայց դրա մասին յետոյ կը խօսենք։ Իսկ առայժմ ենթադրենք որ այդպէս է։ Բոլորս էլ գիտենք, որ ամեն մի տէրութեան մէջ բնակիչները բաժանւած են զանազան դասերի. անհաշիւ հարստութիւն ունեցող մի խումբ մարդկանց և ուրիշ ունեոր դասակարգերի կողքին մենք տեսնում ենք միլիոնաւոր կիսաքաղց աղքատներ, որոնք ապրում են իրենց ճակատի քրտինքով վաստակած օրական ծանր աշխատանքով։ Այս թշւառների վրին հարկ դնել չի կարելի. ճիշտ է, դրանք ամեն տէրութեան մէջ բնակիչների ամենամեծ մասն են կազմում ու դրանց թիւը տասնեակ միլիոնների է հասնում, բայց չէ որ այդ մարդիկ բացի մի մութ անկիւնից, ցնցոտիներից ու մի կտոր շորից ուրիշ ոչինչ չունեն։

Այդ հարկերով չի կարելի ծանրաբեռնել և նրանց, որոնց ամբողջ հարստութիւնը ուժից ընկած մի պատառ հողն է, որի վրայ, մի մեծ մարդու, Լև Տոլստոյի ասածի նման «մի հաւ բաց թողնելու տեղ անգամ չկայ»։

Դէ, ասենք մեր տէրութիւնը այնքան «խելօք» է, որ դրանց նմաններից էլ կարողանում է պոկել զանազան տեսակի տուրքեր։ Ուրեմն բնակիչների ամենամեծ մասը այդ ուղղակի կոչուած հարկերը չէ կարող վճարել, կամ թէ շատ քիչ է վճարում. իսկ ունեորները և հարուստները, որոնք կարող են վճարել ուղղակի հարկ, այնքան քիչ են վճարում, որ եթէ գանձարանը ուրիշ եկամուտներ չունենար՝ եղած գանձի չորս մասից երեքը կը պակասէր։ Մինչդեռ այդպէս չէ, և գանձարանը տարէ ցտարի աւելի հարստանում է։

Որտեղից են գալիս գանձարանի մնացած փողի այն ահագին գումարները։

Գոյութիւն ունի մի ուրիշ տեսակ հարկ, որ կոչւում է անուղղակի հարկ. ահա այդ ձևի հարկերն են, որ ամեն տարի գանձարանը լցնում են միլլիոններով։

Անուղղակի հարկերը շատ խորամանկ կերպով են սարքած. առաջին՝ այդ հարկերը բոլոր մարդիկ են վճարում, հարուստ թէ աղքատ առանց բացառութեան։ Երկրորդ՝ հարկ վճարողները շատ անգամ նոյնիսկ չեն նկատում, կամ բոլորովին չեն էլ իմանում, թէ հարկի համար իրենք շարունակ փող են վճարում։ Երրորդ՝ որքան հարկատուն աղքատ է, այնքան աւելի անտանելի է նրա համար այդ տեսակ հարկի ծանրութիւնը, մինչդեռ հարուստի զրպանի համար անուղղակի հարկը մի դատարկ բան է։

Աւելի մանրամասն քննենք ու տեսնենք այդ ինչ տեսակ հարկեր են և ինչ հրաշքով են գանձարանը լցնում այնքան փողով։

Անուղղակի կամ կողմնակի հարկեր կոչւում են այն հարկերը, որոնք դրւում են ամենագործածական, ապրուստի պիտոյքների և այլ ապրանքների վրայ։

Բայց ինչպէս են հաւաքւում այդ տուրքերը.

Շատ հասարակ ձևով։—Այս կամ այն ապրանքի իսկական արժէքի վրայ աւելացնում են հարկի փողը և այդպէս

թանգացրած գնով ապրանքը դուրս բերում ծախելու։ Ասենք թէ առարկան սկզբում արժէր, չորս կոպէկ, դրա վրայ աւելացնում են երկու կոպէկ հարկի վճարը և այդ ձևով դուրս բերում ծախելու։ Առարկան առնելիս մարդ շատ անգամ ուշ չի դարձնում, կամ չի էլ իմանում, թէ վեց կոպէկ վճարելով նա այդպիսով երկու կոպէկ անուղղակի հարկ է տալիս։

Օրինակ. մինչև Ռուս-Եապոնական պատերազմը 10 տուփ լուցկին արժէր, հարկը հետը հաշուած-8 կոպէկ. այժմ թանգացրել են հարկը չորս կոպէկով, այնպէս որ առաջուայ ութ կոպէկի փոխարէն այժմ 10 տուփ լուցկին ծախւում է 12 կոպէկով։ Հարկերով թանգացրած այդպիսի ապրանքներ շատ շատ կան։ Օրինակ. արտասահմանից Ռուսաստան ապրանք մտցնելու ժամանակ սահմանում նրանց վրայ մաքս են դնում։ Վաճառականը այդ մաքսը ստանում է առնողներից, թանգ գնով ծախելով իւր ապրանքը։

Ուրեմն մենք տեսնում ենք, որ ամեն տեղ, ամեն դէպքում անուղղակի հարկերը վճարում է ժողովուրդը։—Սա դեռ նրանց մի յատկութիւնն է։

Անուղղակի հարկերի երկրորդ յատկութիւնն էլ այն է, որ ինչպէս սկզբում ասացինք, այդ տուրքերը վճարում են անխտիր բոլոր մարդիկ։ Բացատրենք։

Բանը նրանումն է, որ զանազան տեսակի ապրանքներ կան. կան այնպիսի ապրանքներ, որոնք հարկաւոր են ամեն մարդու՝ թէ հարուստին թէ աղքատին. ոչ ոք առանց այդ ապրանքների չի կարող եօլա գնալ. օրինակ. շաքար, թէյ, նաւթ, ծխախոտ, լուցկի, գինի, օղի և այլն. այս առարկաները անհրաժեշտ են ամենքին և բոլորն էլ առնում են դրա համար էլ կոչւում են կենսական անհրաժեշտ պիտոյքներ կամ առաջին կարգի անհրաժեշտ առարկաներ։

Բայց կան և ուրիշ տեսակի ապրանքներ. աղքատ մարդիկ այդ ապրանքները ոչ տեսնում են և ոչ էլ գործ ածում.—դրանք ընդհանրապէս թանկագին իրեղէններ են, որ գործ են ածում միայն հարուստ դասակարգերը։ Խեղճ աղքատը ինչ գործ ունի նրանց հետ։ Նրանք պատրաստուած են միայն հարուստների համար, միայն հարուստները կարող են նրանցից

օգտուել... այդպիսի ապրանքները կոչւում են ճ ո խ ո ւ թ ե ա ն ա ռ ա ր կ ա ն ե ր։

Եթէ անուղղակի հարկերը դնէին միայն այդ տեսակ ապրանքների վրայ այն ժամանակ միայն հարուստ դասերը կը վճարէին անուղղակի տուրքեր, իսկ աղքատները կազատուէին նրանցից, որովհետև ճոխութեան, շռայլութեան իրեղէնները աշխատաւոր մարդիկ չեն առնում, ապա ուրեմն նրանց վրայ դրած տուրքերը չեն վճարում։ Բայց եթէ անուղղակի հարկերը ընկնէր միայն հարուստների վրայ, այն ժամանակ գանձարանը շատ քիչ շահ կունենար, որովհետև, ինչպէս արդէն գիտենք, ամեն երկրում հարուստների թիւը՝ համեմատած ընակիչների ընդհանուր թւի հետ՝ շատ քիչ է։

Դրա համար էլ խորամանկ կառավարութիւնը մտածել է այնպէս անել, որ անուղղակի հարկերը ընկնեն ա մ բ ո ղ ջ ժ ո ղ ո վ ր դ ի վ ր ա յ։ Տէրութիւնը թանկագին իրեղէններից ստացած կարևոր է համարել անուղղակի հարկի տակ դնել երկրի ա մ բ ո ղ ջ բ ն ա կ չ ո ւ թ ե ա ն գործածութեան ամենաանհրաժեշտ պիտոյքները։ Այստեղ արդէն ուզես-չուզես պէտք է ապրանք առնես, ապա ուրեմն հարկ էլ վճառես։

Այժմ խօսենք անուղղակի հարկերի երրորդ յատկութեան մասին. պէտք է հետևենք այս խնդրին առանձին ուշադրութեամբ, որովհետև ժողովրդի ահագին մեծամասնութեան համար հարկերի այս յատկութիւնը ամենավատն ու ամենաանտանելին է...

Բանը նրանումն է, որ բնակչութեան ամենաաղքատ դասակարգերը հ ա մ ե մ ա տ ա բ ա ր աւելի շատ են վճարում անուղղակի հարկեր, քան հարուստները։ Վերցնենք, օրինակի համար, անուղղակի հարկերի ենթարկւած գործածութեան անհրաժեշտ պիտոյքներից մի քանիսը,—շաքար, թէյ, նաւթ, լուցկի, ծխախոտ, օղի և այլն։ Այդ առարկաները առնողը նրանց իսկական արժէքի հետ վճարում է և անուղղակի հարկը։ Ճիշտ է, այդ հարկը ամեն մի առարկայի գնի մէջ կարող են կոպէկներ լինել, թէ և երբէմն և բուբլիներ, բայց չէ որ աղքատ աշխատաւոր մարդու միջոցներն էլ մեծ չեն. նոյն իսկ չնչին հարկն էլ նրա համար մեծ նշանակութիւն ունի,—չէ որ նրա ամեն մի կոպէկը հաշուի է առնուած։ Այս դեռ մի կողմից։

Միւս կողմից՝ եթէ մի մարդ հարուստ է միւսից 10, 50 կամ 100 և աւելի անգամ, նա հо 10, 50 կամ 100 անգամ չատ չի գործածում կենսական անհրաժեշտ պիտոյքներ։ Ի հարկէ հարուստը աղքատից աւելի շատ գործ կածի նաւթ, լուցկի, շաքար և այլն, բայց ոչ այնքան շատ, որքան անգամ ինքը հարուստ է աղքատից, այլ անհամեմատ քիչ քանակութեամբ։ Օրինակով պարզենք. ամսական քսան մանէթ ստացող բանուորը կամ գիւղացին ենթադրենք ամեն ամիս զանազան ապրանքների մէջ անուղղակի հարկ է վճառում մէկ բուբլի. այդ մէկ բուբլի հարկը նրա ամսական եկամուտի քսանից մի մասն է կազմում։ Մի ուրիշը, որ ամսական ստանում է 200 բուբլի. դնենք թէ չորս անգամ աւելի է վճարում անուղղակի հարկ, այսինքն չորս բուբլի. բայց այս չորս բուբլին նրա ամսական եկամուտի հետ համեմատած կազմում է յիսունից մի մասը։ Եթէ մի ուրիշը ամսական ստանում է 2000 բուբլի և 8 բուբլի անուղղակի հարկ է վճարում, այն ժամանակ հարկի համար տւած փողը նրա ամսական եկամուտի երկու հարիւր յիսուն մասից միայն մի՛ մասն է կազմում...

Այստեղից մենք պարզ տեսնում ենք, որ 20 բուբլուց մէկ բուբլի հարկ վճարելը անհամեմատ աւելի դժւար է, քան 200 բուբլուց 4 բ. կամ 2000 բուբլուց՝ 8 բուբլի։

Ահա անուղղակի կամ կողմնակի հարկերի յատկութիւնները, որոնք բնակչութեան ամենաաղքատ դասերի համար իսկական աղէտ, ցաւ ու կրակ են դառել։ Լսենք թէ ինչ է ասում մի գերմանացի զիտնական, որ թէև չինովնիկ, բայց բարեխիղճ մարդ է։ «Ապահովւած և հարուստ մարդիկ ի հարկէ առանց որև է զգալի վնասի կարող են վճարել անուղղակի հարկերը։ Բայց ստորին և ամենաաղքատ դասերի համար դրանք ինքն ըստ ինքեան սպանիչ ու քայքայիչ մի բան են։ Դրա վրայ էլ աւելանում է հարուստի առաւելութիւններից առաջացած մի ուրիշ ծանր բեռ։ Այստեղ գլխաւոր չարիքը նրանում է, որ գործածութեան անհրաժեշտ պիտոյքները աղքատը անհամեմատ աւելի մեծ դժւարութեամբ է ձեռք բերում, քան հարուստը։ Այստեղ առանձնապէս կարևորը այն է, որ անուղղակի հարկերը որքան մեծանում են, այնքան աւելի աշխատաւորի ծառայութեան վարձը հարուստը պակասեցնում է. որովհետև, որքան

ծախսերը շատանում են և վատանում է խեղճ ժողովրդի դրութիւնը, այնքան նա, աշխատաւոր ժողովուրդը, ստիպւած է լինում ապրուստի նոր աղբիւրներ ճարել, գործ փնտռել, հետևապէս այնքան, նա աւելի անտանելի կերպով է կախւում հարուստի փեշերից։

Գործածութեան անհրաժեշտ պիտոյքների վրայ դրւած անուղղակի հարկերի անարդար բաժանումից առաջանում է հարուստների առաւելութիւնները, իսկ աղքատ ժողովրդի վիճակը օր օրի վրայ վատթարանում է և այդպիսով հիմնովին խորտակւում է հասարակական հարկերի բաշխման մէջ անհրաժեշտ հաւասարութիւնը»։

Այժմ պարզ է, որ անհրաժեշտ պիտոյքների վրայ դրւած անուղղակի հարկերը բնակչութեան ամենաաղքատ դասերի համար ամենածանր ու ամենաանարդար հարկերն են։

Անցնենք, վերևում յիշւած ուղղակի հարկերի քննութեան։ Բանից երևում է, որ նրանցից բոլոր էլ իսկական ուղղակի հարկեր չեն. այսինքն ում վրայ որ հարկ է դրւում՝ նա չէ վճարում հարկը, նա իր վրայ դրած հարկը աւելացնում է իւր հողից կամ գործարանից ստացած ապրանքների գնի վրայ կամ իրա բնակարանների վարձն է բարձրացնում. այդպիսով ուղղակի հարկերը էլի ընկնում են ժողովրդի վրայ. սեփականատէրերի վրայ ընկած հարկերը տալիս են բնակարան վարձողները, ապրանք առնողները, մի խօսքով, սպառողները։ Օրինակի համար, հողատէրը իւր հողը վարձով է տալիս գործարանատիրոջ կամ որև է կապալառուին. իւր հողի վրայ գանձարանից դրւած ուղղակի հարկերը նա աշխատում է ստանալ կապալառուից բարձրացնելով կապալագինը։ Ուրեմն հարկը վճարում է ոչ թէ հողատէրը, այլ կապալառուն։ Այժմ դուք տեսէք, որ այդ կապալառուն էլ աշխատում է ազատւել իր վրայ ընկած հարկից, բարձրացնելով հողից ստացած ապրանքների, գները։

Բայց ո՞վ է վերջապէս այդ հարկերի իսկական վճարողը. պարզ է, թէ ով. նրանք, որոնք առնում են այդ ապրանքները, այսինքն սպառողները ժողովուրդը։

Ուրիշ օրինակ վերցնենք։ Մեծ մեծ տնատէրերը որոշ հարկ են տալիս տէրութեան, նրանց ի հարկ է բոլորովին

ձեռընտու չէ որ այդ հարկը իրանց իսկական գրպանից դուրս ձգայ, ուստի նրանք հարկը աւելացնում են բնակարանների վարձագնի վրայ,—ով վարձում է բնակարանը, նա էլ իսկապէս հարկ է վճարում։ Նոյնը կատարւում է բնակարանային հարկերի վերաբերմամբ. մեծ և ընդարձակ բնակարաններ վարձողը՝ առանձին սենեակներ քրահով տալիս՝ հարկի համեմատ բարձրացնում է սենեակների ամսավարձը, հարկը փոքրիկ բնակարան վարձողների վրին դնում, մէջ տեղից ինքը ազատւում...

Բայց շատերը կարող են ասել, թէ, ախր բոլոր մարդիկ ոչ տեղից ունեն հողեր, տուն և բնակարաններ, որ կարողանան դեռ վարձով էլ տալ։

Մեր խօսքը միայն ունեցողների մասին է և ոչ թէ նրանց, որոնք կիսաքանդ խոնաւ խրճիթներում ոչինչ չունեն, կամ, որոնց ունեցածը մի ողորմելի հողի կտոր է։

Մենք խօսում ենք նրանց մասին, որոնք շարունակ վարձով են տալիս և վարձողներից շարունակ փող աշխատում, գանձ դիզում, նրանց մասին որոնք ունեն և մեծ-մեծ տներ, և բազմաթիւ բնակարաններ, և ընդարձակ հողեր։ Դրանք են, որ խորամանկ օձի պէս կամենում են իրենց բոլոր հարկերը խեղճերի վրին դնել։

Այդպէս ուրեմն, մենք տեսանք, որ այդ ուղղակի կոչւած հարկերը,—որոնք ճիշտն ասած շատ քիչ են զանազանւում անուղղակի հարկերից,—գլխաւորապէս էլի աղքատ ժողովրդի վրին են ընկած ու ճնշում նրան։

Իսկ ճշմարիտ և արդարացի ուղղակի հարկը այն հարկն է, որը ստացւում է ղուտ եկամուտից, ղուտ շահից, կամ խոշոր ժառանգութիւնից, և հարկի ծանրութիւնը ընկնում է այն անձի վրայ, որից անմիջապէս առնւում է։

Տուրքերի, «ոսկու» հարկերի թովջի անելու, բաշխման և հաւաքելու այս կամ այն եղանակը կոչւում է հարկատուութեան սիստեմ։

Մինչև այժմ մեր քննած հարկային սիստեմը, որի մէջ ինչպէս տեսանք գլխաւոր տեղը բռնում են անուղղակի հարկերը, պարզ կերպով ամենաանարդարացին է բնակչութեան չունևոր դասակարգերի համար, չափից դուրս ծանր, մանաքանդ

անող։

Բայց այդ դեռ ոչինչ։

Մենք պէտք է այժմ քննենք ու տեսնենք, թէ ինչպէս և ինչի վրայ է գործադրւում այդ անարդարացի ու խիստ միջոցներով հաւաքւած ժողովրդական ահագին գումարները։ Մենք պէտք է ախր իմանանք, թէ ինչպէս է ծախսւում, որտեղ է կորչում միլլիոնաւոր խեղճերի ծանր ու մաշող աշխատանքով, արիւն-քրտինքով վաստակած կոպէկները։

«Գանձարանը ծախսում է տէրութեան կարիքների համար»,—ասում են, սովորաբար, ու հանգստանում։ Բայց մի հարցնող չկայ, թէ այդ ինչ կարիքներ են՝ միլլիոնաւոր բնակիչների կարիքներն են, թէ՞ ուրիշի. ուրիշ խօսքով՝ այնքան ծանր միջոցներով եթէ ժողովուրդը լցնում է պետական գանձարանը, արդեօք դրա փոխարէն իրա կարիքներին ու պահանջներին բաւարարութիւն տալու համար ստանում է նա գանձարանից որև է բան, թէ՞ ոչ։

Արդեօք, ժողովրդի դրութիւնը լաւանում է, թէ չէ։

Վերցնենք ռուսաց կառավարութիւնը, ու տեսնենք ժողովրդի փողերը նա ինչ է անում։

Ամեն տարի ֆինանսների մինիստրը, այսինքն փողերի վրայ հսկող մինիստրը, յունվարի մէկին տէրութեան եկամուտների և ծախսերի ցուցակը կազմում է ու տպում լրագրներում։ Այդ ցուցակի մէջ պետութեան եկամուտները կարդով թւելուց յետոյ, (դրանց մէջ, ինչպէս ասել ենք, գլխաւոր տեղը բռնում են անուղղակի հարկերը), — բերում է պետական ծախսերի հաշիւը։

Ծախսերը բաժանւած են զանազան մինիստրութիւնների վրայ.—այսքան միլլիոն՝ զինուորական մինիստրութեան վրայ ծախսած, այսքան միլլիոն՝ ծովային, այսքան ներքին գործոց, լուսաւորութեան կամ արդարադատութեան և այլն։

Գանձարանի բոլոր փողերի ամենամեծ մասը կլանում է զինուորական մինիստրութիւնը։ Ռուսաստանը պահում է միլլիոնաւոր, ահագին զօրք։ Կառավարութիւնն էլ միշտ գոռոզանում էր իր զինուորական զօրութիւնով. բայց ինչ դառաւ այդ զօրութիւնը.—փոքրիկ Եապոնեան սկզբից մինչև վերջը ջարդ էր տալիս ռուսական զօրքին և նրա զօրութիւնն

ոտքոնի պզպճակի պէս շաղ եկաւ։ Աւելի մեծ խայտառակութիւն պատահեց նրա ծովային զօրութեան հետ՝—միլլիարդներ արժեցող հսկայական նաւատորմիղից միայն ողորմելի տականը մնաց։ Բայց այստեղ չարժէ դրա վրայ երկար կանգ առնել։ Մի բոպէ ենթադրենք, որ ուրիշ հանգամանքներում թէ մեր զօրաբանակը, թէ նաւատորմիղը կանգնած են իրենց կոչման բարձրութեան վրայ և կը կատարեն իրենց վրայ դրած պարտականութիւնը։

Բայց ո՞րն է զօրքի կոչումը.

Ինչո՞ւմ պիտի կայանայ նրա պարտականութիւնը։ Արդեօք, այդ կոչումը համապատասխանում է միլլիոնաւոր կլոսաքաղցած ժողովրդի իսկական շահերին, թէ՞ ոչ։

Քննենք ուշադրութեամբ։—Զօրքի և նաւատորմիղի պարտականութիւնը, ի միջի այլոց, կայանում է նրանում, որ օտար թշնամիներից պետութիւնը պաշտպանեն։ Ամեն մի պետութիւն, դրսի յարձակումից վախենալով, պահում է զօրք և նաւատորմեղ։—Հատ լաւ։

Բայց պատերազմները ինչից են ծագում։

Պատերազմները լուսաւոր տէրութիւնների մէջ գլխաւորապէս ծագում են առևտուրի համար մեծ շուկաներ (բազարներ), հարուստ երկրի կտորներ, յարմար նաւահանգիստներ ձեռք բերելու համար, կամ ուրիշ պատճառներից։

Փողատէր ֆաբրիկանները և հողատէր կալւածատէրերը ամեն տարի ստիպում են իրենց բանւորներին ահագին քանակութեամբ ապրանքներ պատրաստել։ Բնակչութեան աղքատ դասերը իրենց չքաւորութեան պատճառով չեն կարողանում շատ ապրանք առնել, եթէ մի բան էլ առնում են, դա շատ քիչ է լինում, այնպէս որ ահագին քանակութեամբ ապրանքներ մնում են թափւած։ Այդ բոլորից այն է դուրս գալիս,՝որ մի՝ կողմից՝ տէրութեան մէջ միլլիոնաւոր մարդիկ չեն կարողանում թէկուզ մի փոքր մարդավայել կերպով կերակրւել, խմել և հագնւել, ու կոպէկների համար օրն ի բուն, ուժից վեր աշխատում են՝ զրկւելով քնից ու առողջութիւնից, միւս կողմից՝ միաժամանակ հարուստների մօտ դիզւում են ապրանքների ահագին կոյտեր, որոնց տեղաւորելու տեղ անգամ չի գտնւում։ Այդ ահագին կոյտերը նրա համար չէ, որ սարեր դառնան իրանց տէրերի

ուրախացնեն. Ոչ ի հարկէ, բոլորովին ոչ։—Հարուստներին հարկաւոր է, որ որքան կարելի է շատ ապրանք վաճառի որպէս զի շատ օգուտ ստացուի։ Եւ եթէ տէրութեան ներսում հնարաւորութիւն չկայ վաճառելու, այն ժամանակ նրանք աշխատում են օտար երկրներում շուկաներ փնտռել, իրանց ապրանքները սպառելու համար՝ այնտեղ առնողներ գտնել։

Այդ ճանապարհով ամեն մի տէրութիւն ուզում է հարստանալ, և ահա սկսում են պայմանագիրներ ու բանակցութիւններ։ Դէ՞, միշտ ի հարկէ գործը խաղաղութեամբ չի վերջանում։

Ամեն տէրութեան մեծ փողատէրերը (կապիտալիստները) աշխատում են որքան կարելի է շատ պոկել ու յափշտակել, մանաւանդ եթէ վէճը վերաբերում է մի ուրիշ երրորդ, քիչ լուսաւորուած երկրի։ Այստեղ շատ անգամ բանը կռիւ է հասնում—պատերազմ է ծագում։ Պատերազմ է ծագում և այն ժամանակ, երբ ուզում են իրար ձեռքից խլել որև է շահաւէտ երկրի կտոր, նաւահանգիստ, կամ որև է տեղի երկաթուղիներ, որոնք մեծ օգուտներ են տալիս։

Բոլոր ափաշկաճա կամ ծածուկ պատճառներից դրդուած պատերազմ են սկսում ու միշտ յայտարարում, թէ «հայրենիքի շահերի համար են կռւում, նրա արդիւնաբերութիւնը զարգացնելու, այսինքն նրա ապրանքները դուրս տանելու և օտար երկրներում վաճառելու ու շահուելու համար»։

Սուտ է, այդպիսի բան չկայ։

Խեղճ ժողովուրդ, դու կառավարութեան ամեն խօսքին հաւատում ես ու չը դիտես, որ քո աչքերը նա միշտ թող է փչում և քեզ երբէք ճիշտ ու պարզ խօսք չի ասում։

Այդ ճշմարիտ ու պարզ խօսքը այն է, որ հայրենիքի օգուտ-մօգուտ իսկապէս զոյութիւն չունի, և որ այդ բոլոր պատերազմները խոշոր կալւածատէրերի, ֆաբրիկանտների և մնացած մեծ փողատէրերի շահերի համար է անւում։

Փողատէրերի, կապիտալիստների այդ դասակարգը ամեն տէրութեան մէջ պետական իշխանութեան, այսպէս ասած, եղբայրն է. ամեն երկրում նա է կառաւարութեան վրայ ամենամեծ, համարեա միակ ազդեցութիւն ունեցողը։

Մեծ փողատէրերի, բուրժուազիայի շահերի համար կա-

ռավարութիւնը պահպան չան նման միշտ կանգնած է, և հարկաւոր դէպքում իրա ամբողջ զինուորական ոյժը դուրս է բերում նրա շահերը պաշտպանելու՝ դրսի և «ներսի» թշնամիներից։

Իսկ հասարակ աշխատաւոր ժողովուրդը. Ո՞վ է մտածում նրա մասին։

Ոչ ոք։

Հասարակ ժողովուրդը այդ խեղճերի բազմամիլիոն ամբոխը ամեն տեղ ապրում է վերջին ծայր թշւառութեան մէջ։ Աշխատաւոր ժողովուրդը իւր արիւն քրտինքի վաստակով լցնում է պետական գանձարանը. նա իւր դաժան անխոնջ աշխատանքով անհաշիւ հարստութիւն է դիզում իւր կաշին քերթող տէրերի համար. իրա արիւնը ծծողների փարթամ կեանքի համար նա անքում է շարունակ ծանր բեռի տակ։ Այդ ժողովուրդը ուրիշի ունեցածի եռեից չի ընկնում. նա գործ չունի օտարի հողի և երկաթուղիների հետ։ Ծնւում է նա աշխատանքի քուրայում, ամբողջ կեանքում վաստակած-կորցրած մէջքը չի ուղղում և մեռնում է աղքատութեան մէջ...

Բոլոր երկրներում, ամեն տէրութեան մէջ խեղճ աշխատաւոր դասերը ընակչութեան ամենամեծ մասն են կազմում։ Նրանք ինչ ունեն, որ իրար մէջ բաժանեն։ Նրանք ինչ պատճառով պիտի միմեանց հետ պատերազմեն, ինչու պիտի իրար տնաքանդ անեն, իրար կոտորեն։

Ընդհակառակը բոլոր երկրների աշխատաւոր մարդիկը պէտք է եղբօր նման ձեռք ձեռքի տուած դուրս գան կռւելու իրենց շահագործող, իրենց արիւնը ծծող խաւար ուժերի դէմ։ Փոխանակ միմեանց կոտորելու, զանազան երկրների խեղճ ու աղքատ մարդիկը պէտք է միանան իրենց ճնշողների դէմ ընդհանուր կռիւ մղելու համար։ Միայն այդ տեսակ կռւով նրանք կարող են իրանց վիճակը թեթեւացնել և բարւոքել։

Այդպիսով աշխատաւոր-պրոլետար դասակարգը, հակառակ հարուստ դասակարգերի, ոչ մի շահ չունի ժողովուրդների միմեանց հետ ունեցած զինուած կռիւներից։ Ոչ թէ միայն շահ չունի, այլ և այդ կռիւների ամբողջ թշւառութիւնները ուզի չուզի իր գլխին պիտի թափի։

Ապա ուրեմն, թէ, այդ պատերազմները, թէ այդ մշտական զօրքը, որ կլանում են ժողովրդի վերջին ուժերն ու կարո-

ղութիւնը, բացարձակապէս աշխատաւոր ժողովուրդի շահերի դէմ են։

Բայց այստեղ մի աւելի սարսափելի բան կայ։ Յայտնի է որ մշտական զօրքը, բացի դրսի թշնամիներին դիմադրելուց, պաշտպանում է և կառավարութիւնը ու նրա թէ ու թիկունք դառած տիրապետող հարուստ դասակարգերը ներքին թշնամիներից։

Ով է այդ ներքին թշնամի ասածը։

Հէնց ինքը, կառավարութեան զօրք ասող, ժողովուրդը. այն մշտապէս ճնշած, կեղեքած ժողովուրդը, որ վճռում է ոտքի կանգնել պաշտպանելու իր ոտնահարած իրաւունքները ու մարդավայել կեանքի համար կռիւ մղել...

Ահա դրանք են զինուորական գործում պետական կարիքները։ Մենք տեսանք թէ դրանք որքան հեռու են ժողովրդի կարիքներից և որքան հակառակ՝ նրա շահերին։

Այժմ վերցնենք քննելու այսպէս ասած ժողովրդական լուսաւորութեան վրայ եղած ծախսերը։

Մի կողմը թողնենք դեռ այն հանգամանքը, որ ժողովրդական լուսաւորութեան ծախսերը կազմում են գանձարանի ընդհանուր ծախսերի մի շատ չնչին մասը. բայց դուք տեսէք, որ նոյն իսկ այդ չնչին գումարը չի ծախսւում ժողովրդի իսկական լուսաւորութեան, կրթութեան համար, այլ գործադրւում է բարձրագոյն և միջնակարգ դպրոցների, այսինքն, համալսարանների, ճեմարանների, գիմնազիական և ռէալական դպրոցների վրայ։

Բայց այդ բարձր և միջին կարգի դպրոցները աղքատ ժողովրդի որդիների համար չեն ստեղծւած։

Այդտեղ մտնելու համար նրանց առաջը կտրում են հազար ու մի միջոցներով, օրինակ ուսման մեծ վճարով, կամ որպէսզի բոլոր ցանկացողները տեղ չը գտնեն՝ դպրոցներ քիչ թւով են բաց անում. կամ դնում են հազար ու մի արգելքներ, որոնք բոլորն էլ ուղղւած են միմեայն աղքատների դէմ։

Իսկ այդ խեղճերի, հասարակ ժողովուրդ ասւածի համար բանում են առանձին տեսակի ստորին ուսումնարաններ, որտեղ այնքան չնչին կրթում, որքան այլասերում, փչացնում են երեխաների հոգին ու միտքը։ Վերջապէս եթէ մի բան էլ սովորեցնում են

ուսումնարանից դուրս գալուց յետոյ, մի քանի տարի անց, բոլորը մոռացւում է, որովհետև կրթութիւնը շարունակելու հնար չեն տալիս, գրադարաններ չկան, լաւ ու էժանագին գրքեր չը կան, կարդալու բոլորովին ժամանակ էլ չկայ...

Ուրիշ բան է հարուստ բուրժուաների որդիները. նրանց առաջ բաց են թէ համալսարանների, թէ ճեմարանների ու գիմնազիոնների, թէ գրադարանների և ուրիշ շատ կրթական հաստատութիւնների դուները։

Հետևապէս եթէ այս դէպքում էլի խօսում են պետական կարիքների մասին՝ մենք պէտք շարունակ մտաբերենք, որ խօսքը հարուստ դասակարգերի, այսինքն՝ բուրժուազիայի կարիքներին ու պահանջներին կամ նրանց շահերին է վերաբերւում։ Իսկ քաղաքային և գիւղական ժողովրդի կարիքներն ու պահանջները, աշխատաւոր դասերի՝ պրոլետարեատի կարիքները միշտ անուշադիր են թողնւում։

Իսկ ներքին գործոց մինիստրութիւնը նա ում կարիքներն է, ում շահերն է պաշտպանում։

Նա երկրի ներսում «կարգ» պահպանելու հոգսն է քաշում նա խիստ կերպով հետևում է, որ պետութեան մէջ հանգստութիւն և խաղաղութիւն լինի...

Նա միլիոններ է վատնում ոստիկանութեան, ժանդարմների և ամեն տեսակ գաղտնի և աչկարա գործակալների համար։ Բայց ինչու համար, կամ ում համար է անում այդ բոլորը։

Ժողովրդի համար. Ոչ, ընդհակառակը. այդ բոլորը անում է միայն ժողովրդի և նրա շահերին հակառակ։

Ժողովրդի այդ շահերը պահանջում որ են պետական ու ժողովրդական կեանքին վերաբերող գործերը կատարեալ ազատութեամբ քննւեն։ Բայդ այդ ազատութիւնը չեն տալիս, որպէսզի ժողովուրդը իւր թշւառութեան իսկական պատճառները չը հասկանայ և չը վճռի ոչնչացնել իր թշնամիներին։ Եթէ ժողովուրդը հասկանար իր դժբախտութեան պատճառները, այն ժամանակ պիտի խանգարուէր բուրժուազիայի և առհասարակ այս աշխարհի զօրեղների «խաղաղութիւնը և հանգստութիւնը։

Ուրեմն, ահեղ կերպով հրամայում է ներքին գործոց մի-

նիստրությունը՝ թող չը համարձակվի ոչ ոք ազատ խոսել, գրել, հաւաքվել. թող չը յանդգնեն համախմբվել ու պաշտպանել իրանց շահերը... որովհետև կարող է խանգարվել բոլոր կեղեքիչների ու շահագործողների. բոլոր ճնշողների հանգստությունը, նրանց, որոնց բարեկեցությունը հիմնուած է ժողովրդի տգիտության ու անասնական անբանության վրայ...

Բայց հարուստների և կարողություն ունեցողների վրայ եղած կառավարության հոգատարությունը դեռ չէ վերջանում:

Եւ խաւար, մի կտոր չոր հացի համար տառապող անկիրթ ամբոխը հլնց էն է շարունակ քանդում-խախտում է երկրի անարդար օրէնքները՝ թույլերի դէմ ուղղուած ուժեղների օրէնքները և ամեն օր զանազան յանցանքներ է գործում: Այստեղ օգնություն են գալիս դատաւորները, բանտերը և տաժանակիր աշխատանքները: Իսկ այս հասատատությունների ծախսերի համար գանձարանը բաց է թողնում ահագին միլլիոններ և դարձեալ իբր թէ «յանուն պետական կարիքների»:

Այդ կարիքները ժողովրդի կարիքները չեն. բանտերով ու տաժանակիր աշխատանքներով չի կարելի կերակրել սոված մարդկանց և ոչ էլ սարսափեցնել նրանց. այդ պատճառով օրէ ցօր յանցանքները շարունակ շատանում են:

Մենք կարող էինք դեռ շատ երկարացնել մեր քննությունը և տեսնել, թէ ինչպէս են «պետական կարիքների» անուն տակ փչացնում ժողովրդական փողերը. բայց վերևի ասածներն էլ բաւական են, ցոյց տալու որ այսպէս ասած պետական կարիքները ոչ միայն ընակչության ամենաաղքատ ու ամենամեծ մասի՝ ժողովրդի՝ կարիքները չեն, այլ և ուղղակի, համարեայ միշտ, այդ կարիքների հակառակ:

Պետական կարիքները միայն և միայն հարուստ ու տիրապետող դասակարգերի կարիքներ են:

Այդպիսով մենք տեսանք, որ ռուսական հարկային սիստեմը ոչ միայն ժողովրդի համար անարդարացի և ծանր է, այլ և այդ միջոցով հաւաքված փողերը չի գործադրվում ժողովրդի կարիքների և շահերի համար:

Այժմ մենք պէտք է ցոյց տանք, թէ ինչպէս պէտք է լինի հարկերի բաշխումը ու հաւաքումը, հարկային սիստեմը,

որպէս զի ժողովրդի համար արդարացի ու թեթև լինի:

Ցեստոյ, մենք պէտք է ցոյց տանք, թէ որոնք են ժողովրդի իսկական կարիքները և ինչպիսի պայմաններում է հնարաւոր այդ սիստեմի իրագործելը և այդ կարիքներին բաւարարություն տալը:

Մենք արդէն ասել ենք, որ հարկը պէտք է լինի միայն ուղղակի այսինքն, որ հարկատուն իսկապէս ինքը վճարի և ոչ թէ իւր հարկը ուրիշի վրին դնի: Այսպէս կարող է լինել այն հարկը, որը առնում է զուտ եկամուտից կամ զուտ օգուտից, և որը կոչում է ուղղակի եկամուտային հարկ:

Բայց այդ դեռ բաւական չէ:

Որպէս զի նա և արդարացի լինի պէտք է եկամուտի ու զուտ օգուտի չափանարու հետ աւելանա և՝ հարկը ու ոչ թէ մշտապէս նոյնը մնայ:

Բացատրենք դրա նշանակությունը. հինգ տոկոս եկամուտային հարկ կոչում է այն գումարը, որը վերցնում է ամեն 100 բուբլի եկամուտից: Այդպիսի տոկոսով հաշված 300 բուբլուց կոտացի հարկ 15 բուբլի, 1000 բուբլուց 50 բուբլի և այլն: Բայց խորը քննությունը ցոյց է տալիս, որ եթէ հարկային տոկոսը նոյնը լինէր ամեն տեսակ եկամուտների համար, այսինքն մանր, միջակ և խոշոր եկամուտների, այն ժամանակ հարուստները իրենց խոշոր զուտ եկամուտների համեմատությամբ աւելի քիչ հարկ կը վճարէին, քան միջակ կարողության տէր մարդիկ: Վերջիններիս համար այդպիսի բաշխումը առաջիններ հետ համեմատած շատ ծանր կլինէր:

Օրինակի համար վերցնենք երեք մարդ. մէկի տարեկան եկամուտը 600 բուբլի է միւսինը՝ 3000 ր. իսկ երրորդինը 30,000 բուբլի: Միատեսակ 5 տոկոս հարկերի բաշխման ժամանակ, առաջինը եկամտային տուրք կը վճարի 30 բուբլի, երկրորդը՝ 150 բուբլի երրորդը՝ 1500 ր: Կարծես թէ այդպէս արդարացի կը լինէր, բայց միայն այդպէս թուում է:

Մի ընտանիքատէր՝ տարեկան միայն 600 բուբլի եկամուտ ունեցող՝ մարդու համար 30 բուբլուց զրկվելը չափազանց զգալի է, որովհետև նա ծայրը ծայրին հազիւ է կարողանում հասցնել ու եթէ այդ 30 ր. մնար նրա մօտ, նա անկասկած կը գործադրէր այդ փողը իւր կամ իւր ընտանիքի անհրաժեշտ պէտքերի վրայ:

Մինչդեռ 30,000 ռուբլի տարեկան եկամուտ ստացողը 1500 ռուբլի հարկ տալուց յետոյ, իւր մօտ կը պահէր 28,500 ռուբլի՝ էլի մի ահագին գումար։ Այդ գումարի մի մասը, առանց ինքն իրեն որևէ բանից զրկելու, նա պէտք է կամ դիզի, կիւտայ, կամ քամու ըերան տայ, շաղ տայ, քէֆ անի, տրաքելու չափ գերանայ՝ ու ճարպի շատութիւնից՝ կատաղի...

Մինչդեռ արդարութիւնը պահպանած կ՚լինենք միայն այն ժամանակ, երբ զանազան եկամուտների համար կը նշանակի զանազան հարկային տոկոս. այսինքն մանր եկամուտների համար՝ քիչ տոկոս, միջակ եկամուտներից՝ աւելի մեծ, և վերջապէս խոշոր եկամուտների համար—ամենամեծ տոկոս։

Դրա հետ միասին հարկաւոր է, որ փոքր եկամուտները, օրինակ մինչև 600 ռուբ, հարկից բոլորովին ազատուի, 600 ռուբլուց աւելի եկամուտ ստացողը՝ վճարի, ասենք 2%, հարկ, աւելի շատ ստացողը՝ 3%, 4%, 5%, 6% և այլն։ Որչափ խոշոր է եկամուտը, այնքան էլ մեծ պիտի լինի հարկային տոկոսը։

Այդպիսի ուղղակի եկամտային հարկը, երբ եկամտի աճելու հետ միասին մեծանում է հարկի տոկոսը, կոչւում է պրոգրեսսիւ (առաջադիմող) եկամտային հարկ։

Պարզապէս նկատելի է, այն տարբերութիւնը, որ կայ այդ հետեւակ հարկի և այն հասարակ եկամտային հարկի մէջ որի արկային տոկոսը ամեն տեսակ, մեծ ու փոքր, եկամուտների համար էլ անփոփոխ է մնում։ Այդպիսով մենք իմացանք, որ պրոգրեսսիւ (առաջադիմող) եկամտային հարկն է, որ համապատասխանում է ժողովրդի աղքատ դասակարգերի շահերին, որովհետև այդ ժամանակ միայն չքաւորները կազատուին միանգամայն անարդարացի, նրանց համար անտանելի, հարկերի լծից։

Բոլոր մնացած հարկերի տեսակները, դրանց թւում նաև անուղղակի հարկերը, պէտք է վերացնուին, պիտի բոլորովին ոչնչանան։

Գանձարանը իւր եկամուտները պիտի հաւաքի ոչ թէ աղքատներից, որոնք առանց այդ էլ կիսաքաղցած դրութեան մէջ են ապրում, այլ հարուստներից, կուշտերից և փարթամութեան մէջ լող տուողներից։

Իսկ ինչպէս պիտի ծախսուին, ինչպէս պիտի գործադրուին այդ ճանապարհով ժողովուած փողերը։

Ո՞ւմ կարիքների համար։—Ժողովրդի իսկական կարիքների համար, և ոչ այն պետական կարիքների, որոնք ինչպէս մենք արդէն տեսանք, ոչ մի կապ չունեն ժողովրդի՝ քաղաքային և գիւղական շունեորների կարիքների հետ։

Մենք հասկացանք, տեսանք, թէ ինչ են նշանակում, այսպէս ասած «պետական կարիքները»։

Այժմ տեսնենք, որոնք են միլլիոնաւոր խեղճերի իսկական կարիքները ու նրանց սոցիալական պահանջները։

Պէտք է ամենից առաջ նկատենք, որ մեր ժամանակայ կառավարութիւնը չի կարող վերացնել գոյութիւն ունեցող հասարակական անհաւասարութիւնը, որի ամբողջ այժը հիմնուած է արդիւնաբերութեան միջոցների մասնաւոր սեփականութեան և դրանից բղխող մի դասակարգի ձեռքով միւս դասակարգի ճընշելու, կեղեքելու և սարկացնելու վրայ։

Կառավարութիւնը չի կարող վերացնել այդ անհաւասարութիւնից առաջացած հետեւանքները ինչպէս աղքատութիւն, անգործութիւն, անժամանակ ծերութիւն ու մահ, բարքերի վայրենացում, յանցագործութիւն և այլն։ Նա կարող է միայն թեթև չափով որոշ պայմաններում թուլացնել այդ թշւառութիւնները. իսկ կատարելապէս դրանց վերացնելու համար, պէտք է մասնաւոր սեփականութիւնները—գործարանները, դաշտերը և այլ հարստութեան աղբիւրները—յանձնել ամբողջ ժողովրդի ձեռքը.—այս դէպքում միայն կը վերանան թշւառութիւնները։

Բայց որպէս զի այդ բարեփոխութիւնը կատարւի և գլուխ գայ, պէտք է աշխատաւոր դասակարգերը անհրաժեշտօրէն անդուլ և յամառ կռիւ մղեն։ Իսկ որպէս զի այդ կռիւը յաջող ընթացք ստանայ ու կուռողները համեմատաբար քիչ մնաս կրեն՝ պէտք է ստեղծել այդ նպատակին հեշտութեամբ հասնելու համար անհրաժեշտ բարեյաջող պայմաններ։

Այդ պայմանները սրանք են. ժողովրդի ամեն խաւերում պէտք է լայն կերպով տարածել կրթութիւն, լուսաւորութիւն որի համար հարկաւոր և անհրաժեշտ է ձրի ուսուցումն թէ՛ ստորին և թէ՛ բարձր ուսումնարաններում։ Բացի այդ դպրոց-

ներից պէտք է ամեն տեղ հիմնել ընդարձակ ու հարուստ ընթերցարաններ, ժողովրդական համալսարաններ, թանգարաններ, թատրոններ և այլն, ուր ամենքը ուղղակի և առանց վճարելու մուտք ունենային. հարկաւոր է ծերութեան, անդամալուծութեան և աշխատանքի անընդունակութեան դէպքերում ընդհանուր պետական ապահովագրութիւն. պէտք է պետութիւնը կենսաթոշակ տայ այրիներին ու որբերին և տհասարակ բոլոր դժբախտ պատահարների ենթարկուածներին: Հարկաւոր են երեխաների համար ձրի անկելանոցներ, ընակչութեան բոլոր դասերի համար միատեսակ ու ձրի դատավարութիւն:

Կառավարութեան հաշւով պէտք է շինուեն ամեն տեղ հաղորդակցութեան յարմար ճանապարհներ. պէտք է վերացնել մշտական զօրքը և նրա փոխարէն զինել ընդհանուր ժողովրդին ու ժողովրդական ընդհանուր զինավարժութիւն մտցնել և այլն և այլն:

Ահա դրանք են ժողովրդական իսկական կարիքները, որոնց բաւարարութիւն պէտք է տալ գանձարանի միջոցներից:

Բայց շաՀերին դուցէ խորթ է թւում, թէ այդ ինչպէ՞ս է, որ գլխաւորապէս հարուստներից հաւաքուած հարկերը պէտք է գործադրել ամբողջ ընակչութեան, որոնց մէջ և ամենաաղքատ դասերի կարիքների համար:

Արդարացի և օրինաւո՞ր է այդպէս վարուելը:

Այո՛, արդարացի և օրինաւոր է: Եւ, իսկապէս, ո՞ւմ ձեռքերով է ստեղծուել ու ստեղծւում այն ահագին հսկայական հարստութիւնը, որ այժմ միայն հարուստներին է պատկանում:

Խեղճ աշխատաւորների ձեռքերով, կը պատասխանեն բոլորը: Միլիոնաւոր բանուորների դաժան, հիւծող աշխատանքի արդիւնքը դարձել է հարուստների փայլն ու շքեղութիւնը:

Եւ այժմ նրանք իրաւունք ունեն պահանջելու, որ այդ հարստութեան զոնէ մի մասը ետ դարձնի իրենց, որպէս զի դրանով մասամբ կարողանան իրենց կարիքներին բաւարարութիւն տալ, իրենց տաժանակիր կեանքը մի քիչ բարեկարգել:

Բայց ո՞վ է կարող իրականացնել խեղճերի իրաւունքը և ինչպէ՞ս պիտի այդ գլուխ բերել:

Ո՞վ պիտի աղատէ անարդարացի կերպով նրանց վզին գըրած անուղղակի և այլ հարկերից.

Ի հարկէ հարուստները այդ չեն անելու, որովհետև իրենց կամքով նրանք իրենց վրայ մի կոպէկ աւելորդ փող չեն դնի: Հարուստները ի՞նչ գործ ունեն աղքատների ցաւերի հետ:

Թշւառ ժողովրդի դարդերի հետ ոչ մի գործ չունեն նոյնպէս իշխանաւորները, որոնք հարուստների կողմն են պահում, միշտ և ամեն բանում նրանց հաւատարիմ դաշնակիցն են ու պաշտպանը:

Ո՛չ, աշխատաւորները նրանցից չը պիտի սպասեն իրենց համար պաշտպանութիւն և օգնութիւն: Աշխատաւոր դասակարգի կարիքները նրանք չեն հոգալու, նրանք չեն մտցնելու արդարացի հարկեր: Աշխատաւորները իրենք պէտք է գործի գլուխ անցնեն և միմիայն յոյս դնեն իրենց ուժերի վրայ. իսկ դրա համար նրանք ամենից առաջ պիտի ձեռք բերեն օրէնսդրական իշխանութիւն, այսինքն, որ աշխատաւոր դասերը պետական օրէնքներ կազմելու, պետական եկամուտները բաժանելու, կամ նրանց ծախսի վրայ հսկելու իրաւունք ունենան: Այն ժամանակ նրանք կը հրատարակեն այնպիսի օրէնքներ որով կը վերացուեն բոլոր անուղղակի հարկերը և կը մտցնեն միակ կանոնաւոր պրոգրեսսիվ (առաջադիմող) եկամտային հարկը: Այդ օրէնքով բոլոր խեղճերը կազատուին միանգամայն ամեն տեսակ հարկերից; որովհետև նրանց տարեկան եկամուտը կարող էր մի յայտնի դումարից, օրինակ 600 մանէթից, պակաս լինել.

Միայն աշխատաւոր դասակարգերի իսկական ներկայացուցիչները կարող են ձեռք բերել օրէնսդրական ժողովում այդ և դրա նման ուրիշ օրէնքներ: Միայն նրա՛նք կարող են պաշտպանել իրանց դասակարգի շահերը:

Իսկ որպէս զի աշխատաւոր դասի ներկայացուցիչները մասնակցեն այդ ժողովում՝ անհրաժեշտ է. որ ամբողջ երկրում պատգամաւոր ներկայացուցիչների ընտրութիւնը հիմնուած լինի ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ձայնաւորութեան վրայ, և այն պայմանով միայն, որ խօսքի, մամուլի, ժողովների ազատութիւն լինի, որ անձի և բնակարանի անձեռնմխելիութիւն լինի.

Ազատութեան այդ բոլոր տեսակները անհրաժեշտ են,

որպէսզի աշխատաւոր դասակարգը ազատօրէն կարողանայ քննել իւր կարիքները և որոշ պահանջներ առաջադրել։

Ընտրութիւնները պէտք է լինեն՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ, այսինքն, բոլոր չափահաս ազամարդիկ և կանայք պէտք է մասնակցեն օրէնսդրական ժողովի պատգամաւորների ընտրութեան գործում։

ՈՒՂՂԱԿԻ, այսինքն, ընտրողները ուղղակի դառնում են Օրէնսդրական ժողովի պատգամաւորներ, և ոչ թէ մէկ էլ իրանց միջից են ընտրութիւններ անում.

ՀԱՒԱՍԱՐ, այսինքն, որպէս զի ամեն մի ընտրող, հարուստ թէ աղքատ, կրթւած թէ անկիրթ, ընտրութիւնների ժամանակ միմիայն մի ձայն ունենայ.

Եւ վերջապէս ընտրութիւնները պէտք է լինեն ԳԱՂՏՆԻ, որպէս զի ոչ ոք չիմանայ, թէ այս կամ այն ընտրողը ում է ձայն տալիս, և, հետևապէս, ոչ մի կերպ չը կարողանայ ճընշում գործ դնել ընտրողի կամքի վրայ։

Այսպէս ուրեմն, Օրէնսդիր ժողովում աշխատաւոր դասակարգերի ամենաառաջին պահանջներից մէկը պէտք է լինի՝

ՎԵՐԱՑՆԵԼ ԲՈԼՈՐ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԸ և մացնել պրոգրեսսիւ—(ըստ կարողութեան համեմատաբար առաջադիմող)—եկամտային հարկեր։

ՀՀ Ազգային գրադարան
NL0209270

ԼՈՅՍ Է ՏԵՍՆԵԼ

1. Ա. Ն. ԲԱԽ.—Հարուստները և աղքատները . 20 կ
2. Ա. Վ. ՊԵՇԷԽՈՆՈՎ—Հաց, լույս և ազատութիւն 12 կ.
3. ՖԷԴՈՐՈՎԻՉ—Ինչպէս են ժողովում և ծախսում ժողովրդական փողերը.

ՏՊԱԳՐՈՒՄ ԵՆ.

1. Ֆ. ԼԱՍՍԱԼ—Սահմանադրութեան մասին
2. ՊԱՍՄԱՆԻԿ—Ազգային հարցը սոցիալ-դեմոկրատիայի զատարանի առաջ.
3. ԱՆՆԵՆՍԿԻՑ—Գիլոտացիական հարցը Ֆրանսիայում.
4. ՀԵՐՆՕՎ—Գիլոտացին և բանտերը.

Պատրաստում են տպագրութեան համար մի շարք ուրիշ գրքեր

Պահեստում գտնում են.

1. ԼԻԲԿՆԷԽԴ—Սարդերը և ճանճերը . . . . 1 կ.
2. Ինչպէս են գիլոտացիները կռւում իրենց կաբինետների համար . . . . . 10 կ.

Ցանկացողները դիմեն «Յառաջ»-ի խմբագրատուն
Ֆրէյլինսկայա № 6.